# ՀԵՆՐԻԿ ԲԱԲԿԵՆԻ ԲԱԴԵՅԱՆ



Ծանր հիվանդությունից հետո վախճանվեց արտադրության հմուտ կազմակերպիչ, հանրապետության պետական մրցանակի դափնեկիր Հենրիկ Բադեյանը:

Հ. Բադեյանը ծնվել է 1931թ. Կիրովական քաղաքում: 1949թ. ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, այնուհետեւ ուսումը շարունակել եւ ավարտել է Լենինգրադի Ս.Կիրովի անվան տեխնիկական ակադեմիայի ֆիզիկա-տեխնոլոգիական ֆակուլտետը:

Տեղափոխվելով Երեւան, որպես ճարտարապետ-տեխնոլոգ, աշխատանքի է անցնում «Տրանզիստոր» հատուկ կոնստրուկտորական բյուրոյում, հետագայում գլխավորելով արտադրամասը:

1968-1982թթ. Հ.Բադեյանը Ա.Մյասնիկյանի անվան արտադրական միավորման գլխավոր տնօրենն էր: Նրա անմիջական ջանքերով միավորումը դարձավ հանրապետության առաջատար ձեռնարկություններից մեկը: Արտադրության խոշոր կազմակերպչի նրա ընդունակությունները նոր դրսեւորում ձեռք բերեցին 1982-1987 թթ., երբ նրան վստահվեց «Անդրկովկաս կաբել» արտադրական միավորման գլխավոր տնօրենի պաշտոնը:

1987-1991թթ. Հ.Բադեյանը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի նախարարն էր: Դեռեւս այսօր էլ նրան հիշում են ավերիչ երկրաշարժից հետո աղետի գոտու բնակիչները: Անձնական օրինակով տրանսպորտային աշխատողներին ոգեւորելու շնորհիվ նա ապահովեց աղետի գոտում տրանսպորտի անխափան աշխատանքը:

1991-1993թթ. Հ.Բադեյանը հանրապետության արդյունաբերության նախարարի տեղակալն էր:

1993թ. առայսօր նա աշխատում էր գիտությունների ազգային ակադեմիայում, զբաղեցնելով արտադրական-տեխնիկական գլխավոր վարչության պետի, այնուհետեւ ակադեմիայի պրեզիդենտի տեղակալի պաշտոնները: Նա արժանացել է կառավարական բարձր պարգեւների:

Հենրիկ Բադեյան իրեն անմնացորդ նվիրել էր Հայրենիքին ու ժողովրդին ծառայելու գործին: Վայելում էր գործընկերների ու շրջապատի հարգանքն ու համակրանքը:

ՀՀ ԳԱԱ
*նախագահություն*

Կյանքի 69-րդ տարում վախճանվեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտի տեղակալ

**ՀԵՆՐԻԿ ԲԱԲԿԵՆԻ ԲԱԴԵՅԱՆԸ**

Հուղարկավորությունը տեղի կունենա ս/թ նոյեմբերի 23-ին ժամը 14.00-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքից (Մարշալ Բաղրամյան 24):